

Սուրբ Մարտինեայ՝ փայլեացէ
Փայլեացէ նոր արեգակն :

Թնդանօթից ի բոմբիւն , և այլն :
Բազմադարեան ըզփափազ
Էնն զօրութեանց հանցէ յանգ .
Վատթարագոյն քան զբիւր մահ
Են նախատինք գերութեան :
Թնդանօթից ի բոմբիւն , և այլն :



Մարկոս Արքեպիսոս դէռ նոր կայսր ե.
դահ առ Անտիգոնոս գրահ քռադրք .

Մարկոս ջերմէն բռնուած , առ Ան-
տիգոնոս պքսորուած , իրեն առողջու-
թիւն՝ քեզի ալ ազատութիւն կը բաղ-
ձայ : Հոռմայու ձանձրացուցիչ տաքէն
փախելու , ու երբայցեի լեզուով գիրք
մը որ Արեգ քաղաքէն ինծի բերին՝ կար
դայու համար եկայ հոս Սամնիացւոց
երկիրը : Որչափ ալ արտորացի ճամ-
բաս շուտ ընելու , այսու ամենայնիւ
ջերմն բռնեց 'ի Սալոն ամսուն 25ին՝
թուղթդ առած օրս : Հոռդացւոց օրէնք-
ներուն գրքին մէջ կը յիշեմ որ աս
խօսքս կարդացեր եմ . Մէկը չհամար-
ձակի խորհուրդ տալ ուրիշի առանց
օգնելու : Վասն զի խեղճութեան մէջ
եղողը՝ խօսքով միայն չմխիթարուիր ,
թէ որ իրեն ճար՝ մը չընես : Աս ալ կար
այն գրքին մէջ որ՝ խեղճը իր խեղճու-
թիւնը պատմելով աւելի կը մխիթա-
րուի , քան թէ ուրիշներէն մխիթա-
րանք լսելով :

Կը գրես որ աս տեղի դատաւորները
բռնաւոր են , ու անոր համար ժողո-
վուրդը խիստ կ'ատէ Հոռմայու ծերա-
կոյտը : Կը հաւտամ որ չարերն ալ ա-

ռիթ կու տան խստութիւն ընելու , մե-
նաւանդ ատ կղզիին բնակիչները՝ ու-
րոնց համար հին առակը կ'ըսէ . Ամեն
կղզեցիք չար են , բայց սիկիլիացիք ա-
մենէն չարագոյն : Չարերը այնչափ զօ-
րացեր են , ու անոր համար լաւերը այն
պէս մէկզի քաշուեր են , որ եթէ ար-
դարութիւնը քիչ մը խստութիւն չընէ ,
չարերը կը տիրեն աշխարհքիս , ու լա-
ւերը կը համոնին : Բայց մեր դատաւոր-
ներուն խստութիւն ընելը՝ չէ թէ
հոռմայեցի ըլլայնէն է , այլ անգութ ու
անիրաւ ըլլայնուն համար : Խեղքս չհաս-
նիր . բուն դատաւորութիւնը դից ձեռ-
քը ըլլալով , որչափ ալ իրենց դէմ մե-
ղանչեմք՝ կը գլխան վրանիս . իսկ մենք
որ դատաւորութիւնը իրենցմէ փոխ ա-
ռած եմք , յանցաւորներուն ըրածը մե-
զի դէմ չըլլալով ալ՝ կը պարծինք խըս-
տութիւն բանեցընելու , ու անգթու-
թեան անուն ունենալու : Մարդ չէ ա-
նիկայ՝ ով որ մոռնալով իր բնութիւնն
որ դիք գինքը հեզ ստեղծեր են , ինքը
թունաւոր օձի ու կատաղի գազանի
պէս կը վարուի :

Հոռմայու հիմնարկութեան երկոտա-
սաներորդ տարին Հոռմուլոս առջի թա-
գաւորը հրաման հանեց ամեն դի , վուս-
կացւոց , սամնիացւոց , ետրուրացւոց ,
կապուացւոց , ու ալբայեցւոց երկիրնե-
րը , որ ամեն պքսորուածները՝ հալա-
ծեալները՝ խեղճերը՝ Հոռմ գան , հոն
ընդունելութիւն ու օգնութիւն կը զբա-
նեն : Թէ որ յիշողութիւնս չսխալիր ,
մեր հին տարեգրութեանց մէջ կար-

1 Սուրբ Մարկոսն է աւան փոքր մերձ 'ի Սօլ-
Ֆերինո , ուր խալաքեք յաղթող հանդիսացան
ընդդէմ Աւստրիացւոց յամեն 1859 . մինչդեռ գաղ-
ղիացիք խորտակեցին իսպառ զՖէրմին 'ի Սօլ-
Ֆերինո : Վասն որոյ ճակատամարտն այնր աւուր-
կոյն առ գաղղիացիս յանուն Սօլֆերինոյի , և առ
խալաքիս յանուն սուրբ Մարտինեայ :

դացեր եմ որ՝ ան ատենը տասը տա-
րուան մէջ աւելի շատցան Հոռոմայու-
բնակիչները , քան թէ Բաբելոնի ու
Կարբեդոնի բնակիչքը հարիւր տարուան
մէջ : Փառաւորեալ քաղաք , որ ասանկ
գլխութեան ու ողորմութեան վրայ հի-
մնեցաւ : Հին տարեգրութեանց մէջ
չատ թղթեր գտայ արևելքի գաւառնե-
րէն մեզի գրուած , որ ասանկ կը սկը-
սին : Մէք թագաւորքս Պարթեաց առ
ժերակոյտն Հոռոմայ , առ բարեբախտ
ժողովուրդս իտալիոյ , և առ ամենե-
սին , որք են ընդ ձեռամբ խնամող
և բարեգութ Հոռոմայեցոց , ողջոյն և
խաղաղութիւն : Տես ինչ փառաւոր ա-
նուններ են ասոնք , որ նախնի հոռոմա-
յեցիք ունէին . տես ինչ բարի օրինակ
թողուցին ետևէն գալու կայսերաց՝
որ գութ ու խնամք ունենան ժողովըր-
դոց վրայ : Ստոյգ գիտցիր որ ատանկ
գատաւորները՝ որոնք մոռնալով հոռ-
մէական գութը՝ բարբարոսութիւն կ'ը-
նեն , Հոռոմայու հարազատ զակընները
չեն :

Երեսուներեօթը տարուան էի , ձմեռ
մը կիպրոս անցուցի . հոն լսեցի որ Ար-
կադիա լեռան վրայ թագաւորի մը գե-
րեզման կայ եղբը չորս սեան վրայ կայ-
նած՝ խիստ ողորմած ըլլալուն համար
չինքն են իրեն , ու չորս դին ալ յոյն
լեզուով արձանագրութիւն գրեր են :
Գնացի տեսնելու ու կարդացի , աս էր
գրածը . ինչ որ քաղցրութեամբ կըր-
նայի ընել , չըրի խստութեամբ . ինչ որ
խաղաղութեամբ կրնայի ընել , չըրի
պատերազմաւ . ով որ կրնայի աղաչա-
նք համոզել , չվախցուցի սպառնա-
լեօք . որուն որ առանձին ճար կրնայի
ընել , ուրիշներուն առջին չյանդիմա-
նեցի . ով որ կրնայի խրատով ուղղել ,
ձեծել չտուի . մէկը չպատժեցի , որուն
առաջուց իրեք չորս անգամ ներած չըլ-
լայի . կը ցաւիմ պատժածներու վրայ ,
կ'ուրախանամ որոնց որ ներեցի : Ի՞նչ
կ'ըսես աս արձանագրութեանը . ինչ
փառք ունեցած պիտոր ըլլայ ողջու-
թեան ատեն , որուն յիշատակը ասանկ
անմահացեր է : Դիք օգնեն ինձի որ ի-

րեն պէս բարիք ընեմ , չարիք ընելէն
հեռու կենամ . չեմ նախանձիր ոչ Պոմ-
պէտսի , ոչ Յուլիոս կայսեր , և ոչ Սկի-
պիոնի , իրենց առած երկիրներուն , ի-
րենց յաղթանակին համար , որչափ
աս թագաւորին դերեզմանին կը նա-
խանձիմ : Չեմ ըսեր որ չարագործները
պէտք չէ պատժել , վասն զի չարագոր-
ծին աչք գոցողը աւելի չարագործ է .
բայց դատաւորը կարեկցութեք պէտք է
պատժէ , չէ թէ վրէժխնդրութեամբ :
Ո՛րչափ գաւառներ կորուսինք ասանկ
գատաւորներով , որոնք կարծելով որ
սաստիկ խստութեամբ կրնան զսպել
գէշերը՝ աղէկները խրտեցուցին : Տեղ
մը գատաւոր խրկելու ատեն՝ պէտք է
յիշեցնել իրեն ինչ որ Օգոստոս կայս-
րը Ափրիկէի կուսակալը խրկելու ատեն
ըսաւ . Ջքեզ չեմ խրկեր որ զահիճ ըլ-
լաս յանցաւորներուն , այլ որպէս զի
մէկ ձեռքովը անմեղներուն պաշտպան
ըլլաս , մէկաւովը յանցանքի մէջ կնիող-
ներուն օգնես որ ոտք ելլեն : Կը խըր-
կեմ զքեզ՝ որ որբերուն սնուցիչ ըլլաս ,
այրիներուն փաստաբան , վիրաւորնե-
րուն սպեղանի , կուրերուն գաւազան ,
ամենուն հայր : Թշնամիներս համոզես ,
բարեկամներս մեծարես , անանկ ընես
որ գլխութիւնս լսելով՝ իմիսներս հա-
ւատարիմ մնան , ուրիշներն ալ ուղեն
գալ ձեռքիս տակը ըլլալ : Երանի թէ
աս խօսքերս մեր գատաւորներուն սրը-
տին մէջը գրած ըլլային :

Երբոր Պոմպէտոս Հրէաստանը առաւ ,
ու վալերիոս Գրակքոսը հոն կուսակալ
եղաւ , ժամանակագրութեան մէջ կար-
դացեր եմ որ եբրայեցի մը եկեր է բո-
ղոքելու ծերակուտին՝ բոլոր իր ազգին
կողմանէ՝ իրենց դէմ եղած անիրաւու-
թիւններուն համար , ու ասանկ ըսեր
է . Չեր բախտը յաջողելով , ու մեր Աս-
տուածը զմեզ երեսէ ձգելով , Երուսա-
ղէմ՝ բոլոր Ասիոյ թագուհին ու Եբրա-
յեցոց մայրը՝ ծառայ եղաւ Հոռոմայ :
Իրաւ՝ Պոմպէտոսի քաջութիւնն ու զօ-
րութիւնը եղաւ զմեզ նուաճողը , բայց
Աստուծոյ բարկութիւնը ու մեր մեղ-
քերը եղան պատճառը մեր պատժուե-

լուն: Կը ցաւիմ որ չէք փորձած ու չէք դիտեր ըսելիքս . մեր Աստուածը անանկ ողորմած ու բարեգութ է որ, յիսուն հազար մեղաւորաց մէջ տասը արդար որ դատուէր՝ աս պատիժը վրանիս չէր խրկէր: Եգիպտացիք աղէկ փորձեցին որ մեր մի միայն Աստուածը որչափ աւելի զօրաւոր էր քան զամեն ձեր աստուածները: Երբոր մենք մեղաւոր եղանք, ան ատենը տիրեցիք դուք մեզի. որչափ որ մենք աւելի անիրաւ եղանք, դուք այնչափ աւելի զօրացաք. ու քանի որ մեր Աստուծոյն բարկութիւնը տևէ, ձեր զօրութիւնն ալ տևէ պիտոր մեր վրայ: Աս բանիս վրայ ես ուրիշ կերպ կը մտածեմ, դուք ուրիշ. ոչ ես իմ Աստուածս պաշտելէն ետ կը կենամ, և ոչ դուք ձեր աստուածներուն բազմութիւնը պաշտելէն. անոր համար աս խօսքերս մէկդի դնելով, դեսպանութեանս պատճառը ըսեմ: Գիտէք որ այսչափ ատենէ 'ի վեր ինչպէս խաղաղութեամբ եղած է Հոռոմ Հրէաստանի հետ, ու Հրէաստան Հոռոմայու հետ. մենք ձեզի հնազանդ եղած ենք, դուք ալ մեզի իրաւացի բանի մը համար չէ չէք ըսած: Ինչպէս որ խաղաղութենէ աւելի բաղձալի բան մը չկար, ասանկ ալ պատեւրագմէն ատելի բան չկայ. ուրեմն մեկդի ընենք զանոնք՝ որ ձեր կամքը վտանգի մէջ կը դնեն պատերազմ ընելու, ու զմեզ ալ իրենց չարութեամբը կը գրգռեն ասպտամբելու: Խաղաղութեան անշարժ խարխիսն է՝ խռովարաները վերցընել մէջ տեղաց: Ասիկայ ըսելուս պատճառը ան է որ, երբոր մեր թագաւորին անդրանիկը իր անօրէնութեանը համար Եդոմ քաղքէն արքայեցիք, անոր տեղը խրկեցիք մեզի կամպանիոսը, Մարկոսը, Ռուբիոսը, ու վալերիոս Գրակքոսը. որոնք մեզի համար չորս ժանտախտ եղան, անանկ որ անոնց մէկն ալ հերիք էր բոլոր Հոռոմայեցոց կայսերութեան գաւառները թունաւորել, թող թէ մեր խեղճ Պաղեստինը: Ասկէց մեծ ինչ ժանտախտ կրնայ ըլլալ որ, ձեր խրկած դատաւորները գէշերուն չարութեանը արգելք դնելու տե.

զը՝ իրենք նոր չարութիւններ կը հնարեն: Ասկէց ծանր ինչ նախատինք կըրնայ ըլլալ Հոռոմայու որ՝ իրենք միջուկութիւնները պատժելու ու առաքինուութեան օրինակ ըլլալու տեղը, ամեն միջուկութիւններով լեցուած՝ չարութեան առաջնորդ կ'ըլլան կոր: Միջուկութիւններն որ Հրէաստանի երիտասարդացը կը սորվեցընեն, ոչ մեր հայրերէն լսեր ենք. և ոչ գրքի մէջ կարդացեր ենք:

Ո՛վ Հոռոմայեցիք, առաջուց Հոռոմ Հրէաստանի խրատ կու տար, ներեցէք որ հիմայ Հրէաստան գՀոռոմ խրատէ: Աշխարհակալ թագաւորներ քայ զօրավարներու ձեռքով՝ շատ արիւն ընելով՝ քաղաքներ ու գաւառներ կը նուաճեն. բայց զանոնք պահելու համար բարի կուսակալ մը կը դնեն, որ առանց արիւն ընելու՝ բնակչաց սիրտը շահի: Իշխան մը որ սիրտ կը վաստակի, ստակ վաստակողէն սիրելի է. ով որ ստակ վաստակելու համար՝ ուրիշներուն սիրտը կը կորսընցընէ, ժանտախտ սեպելու է զինքը: Ինչո՞ւ է որ արդար բաներու մէջ ալ չհնազանդիր ժողովուրդը ձեր դրած կառավարներուն. վասն զի առաջուց անիրաւ բաներ հրամայած են. անիրաւ հրամանը մարդուս սիրտը կը խտացընէ: Անանկ խեղճ ենք որ աղէկ հրամաններու ալ գէշ կը հնազանդինք, հապա գէշ հրամաններու ինչպէս կրնանք աղէկ հնազանդիլ. հաւտացէք ինձի որ կառավարներուն անըզգամութենէն է որ հպատակները գլխէ կ'ելլան: Մեզի երբայեցուցս Աստուած հրամայած է որ՝ դատաւոր մը երբոր արդար դատաստան ընել չգիտեր, երբոր ազահութեամբ կաշառ ընդունելով՝ կամ ակնածութեան համար՝ անիրաւ դատաստան կը կտրէ, անունն ալ ունեցածն ալ կորսընցընէ ու ծանր պատիժ ընդունի: Որովհետև ուրիշ բաներ ալ առանձին ունիմ ըսելու, կարճ ընեմ հրապարակաւ խօսելս, ու ետքի խօսքս ըսեմ: Թէ որ կ'ուզէք առած երկիրնիդ պահել որուն համար այնչափ վտանգ ու աշխատանք քայեցիք, արդարութեամբ դատեցէք զմեզ, մենք ալ

յօժարութեամբ ձեզի կը հնազանդինք . հոռմայեցիի պէս հրամանեցէք մեզի, որ մենք ալ երբայեցիի պէս հնազանդինք ձեզի, Մեզի զթած կուակալմը տուէք, չափազանց խստութիւն մի ընէք մեզի, որ մենք ալ հլու ըլլանք ձեզի : Գաղցրութեամբ՝ սէր կը գտնաք մեզմէ, ինչպէս հայր մը իր զակէն . իսկ խստութեամբ կեղծաւորութիւն, ինչպէս տէր մը իր ծառայէն :

Ասանկ խօսեր է երբայեցին, ու այնչափ զարմացուցեր է ծերակոյտն որ՝ մէկէն աս երկու որոշմունքը ըրեր են : Նախ ամեն ըսածները գրել ու պահել ան գիրքերուն մէջը, ուր որ օտար ազգաց դեսպաններուն իրաւացի ըսածները կը գրէին : Երկրորդ՝ վալերիոս Գրակքոսը իր պաշտօնէն ձգել, ու անոր տեղը լուգդոնացի Պիլատոսը խրկել : Հիմայ ինչ կ'ըսես աս Հրէին խօսքերուն վրայ, ով Անտիգոնոս . ուսկից առաջ կու գայ մեր այսչափ անունկոտորութիւնը . թէ որ դուն չես գիտեր, ես ըսեմ քեզի : Վասն զի փառասէր մարդիկ թագաւորը կը խաբեն, ան ալ թոյլ կը կենայ կը խաբուի . անոնք ազատութեամբ ինքը անգիտութեամբ՝ առաջ կը քաշեն որոնք որ ետ ձգուելու արժանի են, կու տան որոնցմէ որ առնելու է, կը պատուեն որոնք որ անարգելու է . մէկ խօսքով՝ չէ թէ պաշտօնները կը հօգան, այլ պաշտօնատէրները : իսկ պաշտօնի հասնողները տեսնելով որ իրենց կարողութենէն վեր բանի հասան, կը սկստին իշխանութիւն բանեցընել ու հարկու ըլլալ . իրենց կարողութեանը պակասութիւնը նենգութեամբ ու չարութեամբ կը լեցընեն, հարստանալէն ուրիշ բան չեն նայիր : իսկ երբոր բաներնին անյաջող կ'երթայ ու վտանգի մէջ կ'իյնան, իրենց անիրաւութեան ճարը՝ ծանրագոյն անիրաւութեամբ կը ջանան ընել . հասարակաց խաղաղութիւնը կը խոտվեն իրենց օգտին համար, ու նախատինք կ'ըլլան անոնց՝ որոնք որ անարժաններուն ատ պաշտօնը տուին : Մեծ է իրենց յանցանքը, բայց աւելի մեծ անոնցն որ իրենց պաշտօն կու տան :

Միտքդ պահէ աս ետքի գրելուքս ալ, ով Անտիգոնոս . Հոռմայու հիմնարկութեան 642 տարին շատ պատերազմներ ունեցաւ Հոռովմ, ամեն դի զօրավարներ խրկեց, Մարիոս բռնչին ալ Յուգուրթի նուսիրացուց թագաւորին դէմ, որուն օգնական էր Բաքոս Մաւրիտանացուց թագաւորը : Մարիոս յաղթեց ասոնց, ու երկուքն ալ բռնեց կապեց շղթաներով, ու յաղթանակին օրը՝ իր կառքին առջևէն տանել տուաւ : Հետեալ օրը Յուգուրթը ծերակուտին հրամանովը բանտին մէջ գլխատեցաւ . բայց Բաքոսի շնորհք եղաւ որ մահուանէ խալըսի : Վասն զի սովորութիւն էր մահապարտները չըսպաննած՝ հին տարեգրութեանց մէջ փնտուել որ անոնց պապերէն մարդ եղած է որ մեծ արդիւնք մը ըրած ըլլայ տէրութեան . թէ որ գտնուէր, անոր արդեանցը համար մահապարտը կ'ազատէին մահուանէ : Գտան որ Բաքոսին պապը Հոռովմ եկեր ու ծերակուտին առջին զարմանալի ատենաբանութիւն մը ըրեր էր, անոր համար զինքը արձրկեցին : Ըրած ատենաբանութեանը մէջ աս խելացի խօսքերը կային ոտանաւոր . « Վայ ան թագաւորութեան, ուր լաւերն ու գէշերը չեն ճանչցուիր : Վայ ան թագաւորութեան, ուր լաւերը կը վախեն ու գէշերը կը համարձակին : Վայ ան թագաւորութեանը, ուր խաղաղարարները կանարգուին, ու խռովարարները պատիւ կը գտնեն : Վայ ան թագաւորութեան, ուր ան մոլութիւններն ու չարութիւնները՝ որ ուրիշ տեղ ծածուկ ալ գործելու չեն համարձակիր՝ հոն յայտնի կը գործուին : Վայ ան թագաւորութեանը, ուր ամեկը ինչ որ կրնան կը խօսին, ինչ որ կրնան մտածել կը մտածեն : Անանկ տեղ չըլլայ որ կենաս, վասն զի յանկարծ կամ դիք կը կործանեն, կամ անօրէն թշնամիներ կու գան կը տիրեն » :

Հիմայ ինչ կը մտածես, ով Անտիգոնոս, դից առջին երդում կ'ընեմ որ կիրքս կ'եղլէ երբոր կը մտածեմ որ ասանկ մարդուն թող յաղթական կա .

ուսաց առջևէն քշեցին: Աս թուղթը դա-
տաւորներուն առջին առանձին կարգա-
թէ որ օգուտ մը չընէ ու կերպերնին
չփոխեն, ձն ատենը յայտնի զիրենք
պատժելու իրաւունք կ'ունենամ: Դակ
քու պքսորանացդ համար առաջուց խոս-
տացեր եմ քեզի պաշտպան ըլլալ խոր-
հըրդարանին մէջ, որ դուն կղզիէդ խա-
լըսիս, ես ալ խոստումնքէս. ուստի ըս-
տոյդ եղիր որ խօսքս կը կատարեմ: Պա-
նուկիոս քարտուղարիս գրեցի որ քեզի
երկու հազար արծաթ դահեկան տայ,
կարօտութիւններդ հոգաս. թուղթս ալ
ասկէց կը խրկեմ քեզի, որ տրտում
սրտիդ մխիթարութիւն ըլլայ: Ամեն
ձախորդութիւն ու չարիք հեռու ըլլան
ինծմէ. փաւտինա բարև կ'ընէ Ռու-
փինա կնոյդ, աս անորն է, ատ ասորը,
ես ալ քուկդ:

Նորին առ Մերկեռիոս սաւնիացի
գրած թուղթը.

Միրելի բարեկամիս Մերկեռիոսին,
երբեմն իմ ընկերակցիս:— Լրտեսներէդ
մէկը սպասաւորներուս մէկուն հանդի-
պեր է 'ի կապուս, քուկինդ՝ քու թուղ-
թըդ ինծի բերելու, իմինս՝ իմ բաղձանքս
քեզի տանելու ատենը: Աղէկ դիտելու
որ ըլլաս, կը տեսնես որ սիրտս այնչափ
հոգեբով ու մտմտուքով լեցուն է՝ որ-
չափ դանգաժներով լեցուն է քու թուղ-
թըդ. իմ ջերմանս մխիթարութեան հա-
մար գլխեր ես, ողջ եղիր: Անանկ յար-
մար ատեն հասաւ թուղթդ որ՝ ջերմս
երակներէս կտրիլը ու սրտիս ուրախա-
րար խօսքերդ մէկ եղան. քանի որ
թուղթդ ձեռքս է, ոչ ջերմս կը դառ-
նայ, ոչ մխիթարանքս կը պակսի: Բայց
նայէ մարդուս թշուառութիւնը. եր-
կիրներ կը նուաճեմ, ուրիշներուն թա-
գաւորութեանը կը տիրեմ, բայց մէկ
ջերմս չեմ կրնար դադրեցընել:

Շատոնց գիտես որ իրար կը սիրենք.
ան օրը որ վրաս վստահացար, իմ վրս
տահուութիւնս ալ քեզի պարտրկան ե-
ղաւ. անանկ որ քու չարիքդ իմս եղաւ

իմ բարիքս քուկդ: Վասն զի ինչպէս
որ Պղատոն կ'ըսէ, հոն է ճշմարիտ բա-
րեկամութիւն՝ ուր երկու այլ և այլ մար-
միններու սիրտը մէկ է. ու այն բարե-
կամութիւնը երեսանց է, ուր երկու
մարմիններու հեռաւորութեանը համե-
մատ՝ սրտերնին ալ իրարմէ հեռու է:
Ուրեմն ես միւս դու ըլլալովս՝ դուն հոս
ես, դու ալ միւս ես ըլլալովդ՝ ես քովդ
եմ. անանկ որ իմ հեռաւորութիւնս
քու ներկայութեանդ հետ, ու քու ներ-
կայութիւնդ իմ հեռաւորութեանս հետ
մէկտեղ են. ծերակուտէն ալ շատերը
իմացած են որ երկուքնիս սիրով մէկէն
աւելի չենք:

Թուղթդ բերողէն իմացայ ըրած կո-
րուստդ, ու թղթիդ մէջ ըրած դան-
գատներուդ պատճառը ան է եղեր որ
նաւերէդ մէկը ընկղմեր է, ու նաւա-
վարները իրենց կեանքը ապրեցընելու
համար՝ նաւուն մէջ եղած կապարները
ծով թափեր են: Նաւը բեռներէն թե-
թեցեր է, բայց բեռները քու վրագ ե-
կեր են. այնչափ բեռ ծով չեն թափեր,
որչափ հոգ քու սիրտդ: Գիտնալով քու
քնաւորութիւնդ՝ պէտք է որ կապար-
ներդ փնտռեմ՝ սիրտդ գտնելու հա-
մար. թէ որ այսօր մեռնէիր ու փորդ
բանային, կարծեմ որ սիրտդ մարմնոյդ
մէջ չէին գտնար, այլ կապարին հետ
ծովուն տակը ընկղմած: Ո՛վ Մերկե-
ռիոս, քու հիւանդութիւնդ իմինիս պէս
մարմնոյ ջերմ չէ, այլ հոգւոյ. անկողնի
մէջ չէ հիւանդութիւնդ, այլ նաւու
մէջ. ցամաքի վրայ չէ, այլ ծովու: Բը-
ժիշկներուն սորվեցուցած դեղերը չեմ
իտար քեզի, այլ փիլիսոփաներուն խը-
րատը. քու կեանքդ կապարներուն հետ
ընկղմած է. դուն կապարները չունիս,
բայց կապարները զքեզ ունին:

Ըսին ինծի որ ըրած ֆրասիդ ճարը
չգտնալուդ համար՝ տրտմեր ես. չէս
գիտեր որ ճար չեղած բանին ճար համ
բերութիւնն է: Ո՛վ Մերկեռիոս, հի-
մայ կ'իմանաս որ երբոր ունեցածդ նեն-
գաւոր ժայռերուն հաւտացիր, փա-
փաքդ ալքըններուն, ու ագահութիւնդ
հովբրուն, յանձն առիր զանոնք կոր-